ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2019թ.-ի օգոստոսի 30-ին կնքված N 19/08/07 պայմանագրում
փոփոխություն և լրացում կատարելու մասին

ք.Երևան 30-ը հոկտեմբերի 2019թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Գնորդ), ի դեմս գործադիր տնօրեն Մ.Գրիգորյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Վաճառող), ի դեմս տնօրեն Պ.Հակոբյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

հաշվի առնելով Գնորդին պատկանող Fisher Panda N 003-024-083–ի գեներատորի տեխնիկական սպասարկման և վերանորոգման համար սույն համաձայնագրով նախատեսված ապրանքի ձեռքբերման անհրաժեշտությունը, որն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով Կողմերը պայմանագիրը կնքելիս չէին նախատեսել, և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, ինչպես նաև Կողմերի միջև 2019թ.-ի օգոստոսի 30-ին կնքված N 19/08/07 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.9 կետի պահանջներով, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը համաձայնեցին.

1. Պայմանագրի 1.4. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «Սույն Պայմանագրով Ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2019թ.-ի հոկտեմբերի 31-ը ներառյալ, բացառությամբ Հավելված 1-ի 9-րդ կետով նախատեսված Ապրանքի, որի համար մատակարարման վերջնաժամկետ է սահմանվում 2019թ.-ի նոյեմբերի 30-ը ներառյալ»:
2. Պայմանագրի 3.1. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 396.000 (երեք հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ՝ համաձայն սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված նախահաշվի: Պայմանագրի գինը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, Պայմանագրով նախատեսված դեպքում հնի՝ Վաճառողից ձեռք բերվող նոր Ապրանքով փոխարինելու աշխատանքի պատշաճ իրականացումն ապահովելու ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը»:
3. Պայմանագրի Հավելված 1-ի «Ապրանքի տեսակը և արժեքը» աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետով.

Հ/Հ	Ապրանքի անվանում և տեխնիկական բնութագիր	Չափման միավոր	Քանակ	Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ
9.	Գեներատոր Fisher Panda N 003-024-083-ի համար ջերմային տվիչ՝ փոխարինումով	հատ	1	36 000

4. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի «Ապրանքների տեսակը և արժեքը» աղյուսակի «ԸՆԴՀԱՆՈՒՐ» սյունակում «360 000» թիվը փոխարինել «396 000» թվով:
5. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
6. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
7. Սույն Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Գնորդ	**Վաճառող**
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«Արփա-Սևան» ԲԲԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վ.Վաղարշյան 20
ՀՎՀՀ՝ 01540062	ՀՎՀՀ՝ 00003206
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000	Հ/Հ՝ 166004670583
Մ.Գրիգորյան	**Պ.Հակոբյան**
Գործադիր տնօրեն	*Տնօրեն*